

0 AUG 2010

Հ. Ա. Խ. Հ. Առողջապահության մազովրդական Կոմիտարիատ
հանրամասչելի գրադարան. գրքույթի № 9
ՍԵՆ.-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻ ՍԵՆԻՏ.-ԼՈՒՍԱՈՐՈՒԹՅԱՆ ՑԵՆՏՐԱՆ

616.9:

Մ-16

ՄԱՂԱՐԻԱ

(ԴՐԱ ԵՐՈՅՔ)



ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՄՇԱԿՄ ՅԵԿ ԼՐԱՑՐԱԾ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԴՈՂՈՎՈՒԹԻՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1927 թ.

21 JUN 20

Հ. Ա. Խ. Հ. Առողջապահության ժողովրդական Կոմիտարժաք
հանրականացնելու գրազարան, գրքույշ Նո 9
Ան.՝ ՀՅՄԲԱՐԵԿԵԳԻՑՈՒՆ ԲԱԺՆԻ ԱՌԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՅԱՐԱԿԱՆ ՅԵՆԹԱՅԱԺՄԻՆ

616.9

Վ-16

ՄՐ

ՄԵԼԱՐԻԱ

(ԴՈԴԵՐՈՅՔ)

1003
10599



ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՄՇԱԿԱԾ ՅԵՎ ԼՐԱՅՐԱԾ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԴՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ

1927 թ.

ՄԱԼԱՐԻԱ

Ի՞նչ է ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Վարակիչ կոչվում են այն հիվանդությունները, զո-
քոնք անցնում են հիվանդից առողջին:

Յուրաքանչյուր վարակիչ հիվանդություն ունի իր
հատուկ մանրեն, վորը շատ փոքր և հասարակ աչքով
անտեսանելի արարած է: Մանրեն բաղկացած է մեկ բջի-
ջից և նրան տեսնելու համար հարկավոր է մեծացնել
մինչ 1000 կամ ել ավելի անգամ: Առանց մանրեյի վա-
րակիչ հիվանդություն չկա:

ՎՈՐՏԵՂ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՄԱՆՐԵՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ
ԱՆՑՆՈՒՄ ՀԻՎԱՆԴԻՑ ԱՌՈՂՁԻՆ

Նայած թե ինչ տեսակ վարակիչ հիվանդություն է,
կան հիվանդություններ, վորոնց մանրեները գտնվում
են հիվանդի արյան մեջ, որին, մալարիա, բծավոր տիֆ
և այլն. կան հիվանդություններ, վորոնց մանրեները
գտնվում են հիվանդի թքի կամ խորխի մեջ, որին. թո-
քախտը. իսկ վորովայնի տիֆի մանրեներն ավելի հա-
ճախ գտնվում են հիվանդի աղիքների մեջ:

Կան հիվանդություններ, վորոնց մանրեներն անց-
նում են հիվանդից առողջին չնշառության միջոցով,
հազի միջոցով, որին. թոքախտ. կան հիվանդու-
թյուններ, վորոնց մանրեներն անցնում են վարակված
ուտելիքի և խօնելիքի միջոցով, որինակ՝ վորովայնի

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ	ՊԱՏՎԵՐ 4070
ԳՐԱՓ 290 Բ.	ՏԻՐԱԳ 5000

տիֆ, լսոլերա, զիգենտերիա, կան և այնպիսի վարակիչ հիվանդություններ, վորոնց մանրեներն անցնում են հիվանդից առողջին միջատների կծելու միջոցով, որինակ՝ բժավոր տիֆ, մալարիա և այլն:

Ի՞նչ է ՄԱԼԱՐԻԱՆ

Մալարիան ամենքին հայտնի գողերոցքն ե, վորն աւրիշ անուն ես ունի՝ ձահճային տենդ, վորովհետեւ նա տարածված է ձահճու և խոնավ տեղերում: Մալարիան գոյություն ունի շատ վաղուց. նա լավ հայտնի յեր դեռ հին ժամանակներից:

Առաջ մարդիկ կարծում եյին, վոր դողերոցքը վատ ողից և լինում և դրա համար ել անունը գրեցին մալարիա, վորը նշանակում ե՝ վատ ող:

Բայց գիտությունը հերքեց այդ սխալ կարծիքը:

1894 թվին մեկ Փրանսիացի բժիշկ (Լավերան) գտավ մալարիայի մանրեն (մակարույծը-պարագիտը) և այն որվանից հայտնի գառավ, վոր մալարիան վարակիչ հիվանդություն ե:

ՎՈՐՔԱՆ Ե ՏԱՐԱԾՎԱԾ ՄԱԼԱՐԻԱՆ

Խորհրդային Հանրապետությունների Միության մեջ մալարիայով հիվանդանում են տարեկան 5 միլիոն մարդ, իսկ մնացած բոլոր վարակիչ հիվանդություններով մոտ 12 միլիոն մարդ, այնպես վոր մալարիան կազմում ե բոլոր վարակիչ հիվանդությունների համարյա կեսոր:

Մալարիան մնացած բոլոր վարակիչ հիվանդությունների մեջ իր թվով բոնում է առաջին տեղը:

Մալարիան ամենից շատ տարածված է այն յերկրներում, վորտեղ ձահճիներ շատ կան, որինակ՝ Հայտ-

տանում (Արաքսի հովտում), Աղերքայջանում, Թուրքիստանում ևայլն:

ՄԻԱՅՆ ՃԱՇՃՈ՞Ս ՏԵՂԵՐՈՒՄ Ե ԼԻՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ

Վոչ, մալարիան առհասարակ տարածված է այնպիսի տեղերում, վորտեղ կանգնած ջրեր կան, մինչև անգամ ամենափոքր տարածության ջրեր:

Բացի գրանից, մալարիան շատ է տարածված և զանգաղ հոսող վետերի ծանծաղություններում:

ԲՈԼՈ՞Ր ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԵՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Թուչունները և յեղջուրավոր մեծ կենդանիներն ունեն իրենց մալարիան, վորն ունի իր հատուկ մանրեն. այս վերջինը գողերոցքի մանրեյին նման չե և նրա տված հիվանդությունը մարդու գողերոցքից ջոկնվում ե:

Մարդու գողերոցքով ուրիշ կենդանիներ չեն հիվանդանում, ինչպես և կենդանիների գողերոցքով մարդու չե վարակվում:

Ի՞ՆՉՊԵՍ Ե ՄԱՐԴ ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Մալարիայի մանրեն ընկնում է մարդու արյան մեջ, շատ շուտ սկսում է աճել ու բազմանալ:

Աճման ժամանակ մանրեն արտադրում է թույն և թունավորում է մարդուն, վորը և այդ թույնից հիվանդանում ե:

Ի՞ՆՉՊԵՍ Ե ՄԱՐԴ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ


Մալարիան պատկանում է այն վարակիչ հիվանդություններին, վորոնք վարակում են հիվանդի արյունը. բայց նա անցնում է հիվանդից առողջին վոչ թե ողի մեջոցով, վոչ թե ուտելիքի կամ խմելիքի միջոցով, այլ միայն մոծակի կծելու միջոցով:

ԱՄԵՆ ՄՈՇԱԿ ԿԱՐՈ՞Չ Ե ՎԱՐԱԿԵԼ ՄԱՐԴՈՒՆ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Վոչ. մալարիա տարածող մոծակը բոլորովին ջոկ ե
և զանազանվում ե ուրիշ մոծակներից:

Բացի այդ, պետք ե իմանալ, վոր մալարիան տա-
րածում ե եղ մոծակը:

ՄԱԼԱՐԻԱ ՏԱՐԱԾՈՂ ՄՈՇԱԿԻ ՆՇԱՆՆԵՐԸ ՎՈՐՈՇՔ ԵՆ



Նկար 1. Մալարիա տարածող մոծակ



Նկար 2. սովորական մոծակ

Այս նկարների վրա զետեղված են մալարիա տարա-
ծող մոծակի և սովորական մոծակի պատկերները:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ՆԱՏՈՒՄ ՆՐԱՆՔ

Նախ և առաջ աչքի յե ընկնում այդ յերկու մոծակի
նստելու ձեւը:

Մալարիա տարածող մոծակը նստում ե պատի վրա
պոչի կողմը բարձր պահած, իսկ գլուխը պատին կպած,
այնպես վոր մոծակը կպած ե պատին թեք գծով և պա-
տի հետ կազմում ե անկյուն (նկար 1):

Իսկ մյուս տեսակի մոծակը նստում ե պատի վրա
կուցած և պատին կպած ե կոր գծով (նկար 2):

Յերրորդ նկարի վրա մենք տեսնում ենք յերկու մո-
ծակի կյանքը ճահճում:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՆ ԶՈՒ ԱՇՈՒՄ

Թե մեկը և թե մյուսը ձու յեն ածում կանգնած
ջրերի յերեսին, լինի նա ճահճիճ, կամ չատ փոքր չափով
կանգնած ջուր. մինչեւ անգամ նրանք կարող են ձու ա-
ծել վոչ արագ գնացող ջրի յերեսին:


Հասարակ մոծակը ձվիկներն ածում ե կույտ կույտ.
ձվիկների կույտերը միացած են միմյանց հետ և փոքր
նավակի տեսք ունեն, իսկ մալարիա տարածող մոծակը
ձվիկներն ածում ե հատ հատ և միմիանցից զատ զատ:

Յուրաքանչյուր եղ մոծակ ածում և 150 ձու. մի
ամառվա ընթացքում մի մոծակը մի քանի միլիոն սե-
րունդ ե տալիս:

ԻՆՉ Ե ԹՐԹՈՒՌԸ

Զվից անմիջապես մոծակ գուրս չի դալիս: Մի քա-
նի որից հետո ձուն դառնում է թրթուռ:

Ապա նայեցեք այդ յերկու մոծակների թրթուռի
վրա (տ. նկար 3): Սովորական մոծակի թրթուռը ընկղմ-
ված ե ջրի մեջ գլուխնիվայր, իսկ պոչի կողմը բարձր
և ջրի մակերեսույթին կպած ե միայն պոչի կողմը. իսկ
մալարիա տարածող մոծակի թրթուռը ջրի մեջ պառկում
և հորիզոնական գծով, ջրի մակերեսույթին կպած ե ամ-
բողջ մեջքով: Թրթուռից անմիջապես մոծակ չի դուրս
զալիս. թրթուռը դառնում է հարսնյալ (տ. նկար 3).




Նկար 3.


Ի՞նչ է ՀԱՐՍՆՅԱԿԸ

Մեկ կամ յերկու չարաթից հետո թրթուռք գառնում է հարսնյակ:

Ով տեսել ե շերամի վորդը, նա գիտե՝ ինչպես սերմից գուրս ե գալիս վորդը—թրթուռը ու ինչպես մի վորոշ ժամանակից հետո վորդը՝ փաթաթվելով կոկոնի մեջ գառնում է հարսնյակ, վորը հետո զառնում է թիթեռ և կոկոնի միջից գուրս թռչում իր ժամանակին:



Նկար 4. Մարմարիական մոծակի թրթուռը



Նկար 5. Մարմարիական մոծակի հարսնյակը

Եռյնպես և մոծակի թրթուռը զառնում է հարսնյակ. թրթուռը կուչ ե գալիս, փաթաթվում չափկով և 2-4 որ հարսի պես քողով ծածկված է մնում. Հետո զառնում է մոծակ, վորը պատռելով իր քողը գուրս և թռչում ջրի յերեսը:

Յերկու մոծակների հարսնյակները զանազանվում են միմիանցից գլխակուրծքի (կուչ յեկած մասի) յերկարության և լայնության չափով:

ԻՆՉՊԵ՞Ս Ե ՄՈԾԱԿԸ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ ՀԻՎԱՆԴԻՑ ԱՌՈՂՁԻՆ

Եղ մոծակը, կծելով հիվանդին, ծծում ե նրա արյունը. արյան հետ միասին մալարիայի մակաբույժն անցնում ե մոծակի ստամոքսը:

Մոծակի մարմնի մեջ մալարիայի պարագիար բեղմնավորվում ե և տալիս ե հունդ, վորը մնում ե մոծակի մարմնի մեջ:

Պարագիտի հունդն անցնում ե մոծակի թքի գեղձի մեջ:

Մակաբույժի հունդ պարունակող մոծակը կծում ե առողջ մարդուն և խայթելիս կնճիթի միջոցով փոխադրում ե իր թքի հետ և նրա մեջ դանվող մանրեյի հունդը, վորը և վարակում ե առողջին:

Բացի մարդուց և մոծակից ել ուրիշ վոչ մի տեղ մալարիայի պարագիտը չի գտնված:

ԿԱՐՈՂ Ե ԱՐԴՅՈ՞Ք ՄԱԼԱՐԻԱՅԻ ԱՄԵՆ ՄԻ ՄՈԾԱԿ ՎԱՐԱԿԵԼ ՄԱՐԴՈՒՆ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Ի հարկե վոչ. մալարիայով կարող ե վարակել մարդուն միայն այն մոծակը, վորը պարունակում ե իր մեջ մալարիայի մանրեն, վորն առողջին կծելուց առաջ ծծել ե մալարիայով մի վորեւ հիվանդի արյունը մալարիայի մանրեյի հետ միասին:

Մալարիա տարածող մոծակն ընդհանրապես ապրում ե մարդկանց բնակարանին մոտ, մինչեւ անգամ նրան կարելի յե «կիսատնային» կենդանի հաշվել, իսկ սովորական մոծակն ապրում ե ամեն տեղ: Բացի դրա-

նից մալարիա տարածող մոծակը գիշերվա կենդանի յեցերեկը նա թագ ե կենում բնակարանի մութ տեղերում, պահարաններում, պատերի վրա կախ արած իրերի տակին, քարշ արած հագուստի ծալքերի մեջ և այլն... Բայց ավելի հաճախ նա թագ ե կենում զոմերում, մասնում, մարտզում, արտաքնօշներում, աղբատեղերում, մանելով այդ տեղերի մութ անկյուններն ու խույս տալով քամուց և արեգակի ճառագայթներից... Մալարիայի մոծակը ձու յե ածում կանգնած ջրերի վրա, լճակների, ջրափոսերի, ջրհորի ջրի վրա, առուների ափի մոտ, գետերի և գետակների ափի մոտ գտնվող բույսերի մոտ:

Մոծակները ձմեռում են վերոպրյալ չենքերում և զարնանը քնից զարթնելուց հետո սկսում ձու ածելը. մոծակները բնակելի վայրերից հեռու չեն ապրում, միայն քամին ե քչում նրանց հեռու տեղեր. բացի դրանից նրանք բարձր չեն թռչում, բայց կարող են ծառերի ոգնությամբ և բարձր տեղեր անցնել:

ՄԱԼԱՐԻԱՆ Ի՞ՆՉ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԻ

Ժողովուրդը շատ լավ վորոշել ե այդ հիվանդությունը: «Դողերոցք» խոսքը պարզ վորոշում ե մալարիայի նշանը, այսինքն՝ հիվանդն ունենում է դող ու հետո երոցք (տաքություն):

Մոծակի կծելուց 8-14 որ հետո սկսվում ե հիվանդության առաջին նշանը, այնպես վոր վարակելուց հետո անցնում ե 1 կամ 2 շաբաթ ու հետո յե սկսվում հիվանդությունը:

ԻՆՉՈ՞Ի ՅԵ ԱՅԴՊԵՍ

Վարակման առաջին որը մալարիայի մանրեն գեռ չի ազդում: Մի վորոշ ժամանակ ե հարկավոր, վոր նաքազմանա և թույն արտագրի. քանի վոր թույնը պակաս

Ե, հիվանդը վոչինչ չի զգում, բայց հենց վոր մանրեները շատանում են, թույնն ել շատանում և ու դրանից հիվանդանում և մարդը։ Այդ ժամանակամիջոցը, վորը տեսում ե վարակելու որից մինչև հիվանդության յերեվալը, կոչվում ե գաղտնի շրջան։

ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ Ե ԼԻՆՈՒՄ

Հիվանդը գեռ շտկարացած մի յերկու որ վատ ե զգում, մարմինը կոտրատվում է, տրամադրությունը վատ է, ախորժակ չունի, յերբեմն գրուխն ե ցավում, զգում ե բնդհանուր մարմնի թուլություն և զրկվում ե քնից ու հանգստից։

Այս դրության մեջ հանկարծ սկսվում է դողը, վորը և կազմում ե մալարիայի առաջին շրջանը։

Յերեմն դողը շատ թեթև ե լինում, հիվանդը միտյն սառուու և զգում մարմնի մեջ, յերեմն սրսփոց, յերեմն միայն ձեռքն ու վոտքն ե սառչում։ բայց յերեմն այնքան խիստ ե լինում դողը, վոր հիվանդի տառաները մեկ մեկի յեն խփվում, շարժվում և մահճակալը, վորի վրա պառկած ե հիվանդը, վերմակներն ամենենին չեն ողնում հիվանդին, դողը չի անցնում և այդպես մի քանի ժամ։

ԴՈՂԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ Ե ԼԻՆՈՒՄ

Դողն աստիճանաբար պակասում է, հիվանդը սկըսում է տաքանալ, սկսվում է երոցքը, տաքությունը, վորը կազմում ե մալարիայի յերկրորդ շրջանը։ տաքությունն աստիճանաբար բարձրանում է, հիվանդն այրվում է, վառվում է հնոցի պես։ գլուխը ցավում է, յերեմն գլխացավն ու տաքությունն այնքան խիստ են լինում, վոր հիվանդը զառանցում է։

Մի քանի ժամից հետո տաքությունն սկսում է իջնել։ հիվանդի դրությունը լավանում է և սկսում է քրտնել։

ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԳԼԻԱՎՈՐ ՆՇԱՆՆԵՐԸ

Վերը գրածից պարզ է, վոր մալարիայի նշաններն են զող, տաքություն և քրտինք, այս բոլորը տեսում ե մեկ կամ մեկուկես որ, վոչ ավելի։ և այս յերեք նշանը միասին կազմում են մալարիայի մեկ նոպան։

ՄԵԿ ՆՈՊԱՅՈՎ ՎԵՐՋԱՆՈՒՄ Ե ԱՐԴՅՈՒ Ք ՄԱԼԱՐԻԱՆ

Վոչ յերեմն հետեւյալ որը, կամ մեկ-յերկու որ անց, յերբեմն միենույն ժամին, ինչպես և առաջին անգամը, սկսվում է զողը, վորից հետո գալիս ե տաքությունն ու հետո քրտինքը և այդպես կանոնավոր կերպով կարող ե շարունակվել շաբաթներ, ամիսներ։ և վորքան շատ են կրկնվում մալարիայի նոպաներն, այնքան շատ և թուլանում հիվանդը և այնքան շատ և մաշվում նա։

ՊԱՏՃԱՌՆ Ի՞ՆՉ Ե

Բանը նրանումն է, վոր մի քանի տեսակ մալարիա կա։ մի տեսակն այն է, վոր մեկ որ բռնում է, մեկ որ չի բռնում և կոչվում է յերեքորյա մալարիա։ յերկրորդն այն է, վոր մեկ որ բռնում է յերկու որ չի բռնում և կոչվում է չորեքորյա մալարիա։

Մալարիայի մակաբույծները (մանրեները) մանում են հիվանդի արյան կարմիր գնդիկների մեջ և նրանց մեջ զարգանում։ յերբ կարմիր գնդիկները քայքայվում են և մանրեներն թափվում են արյան հունի մեջ, այն ժամանակ սկսվում է զողերոցքը։ Կան մանրեներ, վորոնք յերրորդ որն են ավարտում իրենց զարգացման լրիվ

չըջանը, այն ժամանակ դողերոցքն որը մեջ է լինում.
կան մակաբույժներ (մանրեներ), վորոնք չորրորդ որն
են վերջացնում իրենց զարգացման լրիվ շրջանը, այն
ժամանակ հիվանդությունը յերկու որը մեջ է լինում:

Յերբեմն որը մեջ զարգացող մանրեների մի մասը
զարգանում է մեկ որ առաջ, կամ մեկ որ հետո, այն ժա-
մանակ դողերոցքն ամեն որ է լինում:

Յուրաքանչյուր տեսակ մալարիայի մանրեն ունի
իր արտաքին տեսքը և իր հատկությունը:

ՄԱԼԱՐԻԱՅԻ ՄԱՆՐԵՆ ՈՒՐԻՇ ԵԼ Ի՞ՆՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Կան հազվագյուտ մարդիկ, վորոնք վարակվում են
մալարիայով, բայց չեն հիվանդանում. նրանց արյան
կարմիր գնդիկներն այնքան ուժեղ են, վոր մալարիայի
մանրեն չի ազդում. նրանց վրա. արյան մեջ ընկած ման-
րեն շատ շուտ վոչնչանում է և անհետանում:

Բայց կան և այնպիսի մարդիկ, վորոնք մի անգամ
հիվանդանալուց հետո շարունակում են պահել իրենց
մարմնի մեջ մալարիայի մանրեն, վորը յերբեմն դուքս և
գալիս իր թագստի տեղեց և, ըսկելով արյան մեջ,
սկսում ենորից աճել ու բազմանալ, առաջ բերելով մա-
լարիայի նոր նոպա. և այսպես անվերջ, մինչև հիվան-
դի բոլորովին առողջանալը կամ նրա մահը:

Այս տեսակ մալարիան կոչվում է գաղտնի, կամ
կրկնվող մալարիա:

ՈՒՐԻՇ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿ ՄԱԼԱՐԻԱ ԿԱ

Բացի վերը նկարագրած տեսակներից կա և մալա-
րիայի տրոպիկական տեսակը:

Պատերազմից առաջ այս վերջին տեսակը մեզ մոտ
չկար: Պատերազմի ընթացքում անգիտական զորքի հըն-
դիկ զինվորները բերեցին իրենց հետ տրոպիկ մալա-

րիան: Հիշյալ զինվորները վարակեցին մեր մոծակներին
այդ մալարիայի մանրեներով. մոծակներն ել իրենց հեր-
թին տվեցին այդ մալարիան մեզ:

Տրոպիկական մալարիայի մանրեն նույնպես շատ
փոքր ե, բայց նրա զարգացումը կատարվում է այլ
կերպ, դրա համար ել տրոպիկական մալարիան ունի
ուրիշ ընթացք. նրա նոպաները կրկնվում են ամեն որ:

Բացի դրանից տրոպիկական մալարիան ընթանում է
շատ ծանր, տեսում է յերկար, դժվար է բժշկվում և շատ
հաճախ գլորում է հիվանդին գերեզման:

ՄԱՐԴՈՒ Ի՞ՆՉՆ Ե ՀԻՎԱՆԴԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ

Մալարիան մարդու մարմնի մի մասի հիվանդու-
թյուն չե, այլ ամբողջ կազմվածքի հիվանդություն է:

Ի՞ՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԱՐՅԱՆ ՄԵԶ

Մարդու արյան ամենագլխավոր և ամենապետքա-
կան մասերից մեկը կարմիր գնդիկներն են, վորոնք որ-
նունդ են մատակարարում մարդու կազմվածքի բոլոր
մասերին:

Բանն ել հենց այն է, վոր մալարիայի մանրեն ար-
յան մեջ ընկնելուց հետո բնակություն և հաստատում
արյան կարմիր գնդիկների մեջ, սնվում և նրանցով և
քայլայում ու վոչնչացնում նրանց:

Մալարիայի ամեն մի նոպա կապ ունի մանրեների
բազմանալու հետ. ամեն անգամ, յերբ մանրեները՝ բազ-
մանալով արյան կարմիր գնդիկների մեջ, քայլայում,
պատռում են գնդիկը և թափվում արյան հունի մեջ,
այդ ժամանակ հենց սկսվում է մալարիայի նոպան:

Կարմիր գնդիկի միջից դուրս յեկած նոր մանրեները
մտնում են առողջ մնացած ուրիշ գնդիկների մեջ և
դրանց ևս փչացնում. այնպես վոր մանրեների բազմա-

նալիս ամեն անգամ նորանոր կարմիր գնդիկներ են վա-
րակվում նրանցով և փչանում:

Այդ պատճառով կարմիր գնդիկների թիվը որեցոք
պակասում է, իսկ զբա հետեանքը լինում է այն, վոր
հիվանդի մարմնի մասերի անունոքը վատանում է, հի-
վանդն արյունապահասություն կոչվող տկարությունն
է ստանում: Հիվանդն որեցոք մաշվում, զեղնում է և
ստանում է մի այնպիսի տեսք, վոր հեռվից անգամ կա-
րելի յէ ջոկել՝ թե նա հիվանդ է մալարիայով:

Նիհար ու դեղին դեմքով, վահա մարմնով և ուռած
փորով, ահա մալարիայով հիվանդի տեսքը:

ՄԱՐԴՈՒ ՎՈՐ ԳՈՐԾԱՐԱՆ Ե ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ՎՆԱՍՎՈՒՄ

Մալարիայի մակարուցների աճման և զարգացման
հետեանքով արտադրվում է թույն, վորը վարակում է
արյունը:

Վարակված արյունը շրջապայելով մարմնի մեջ
թունավորում է հիվանդի կազմվածքի բոլոր գործարան-
ները և առաջին հերթին արյան գոյության հետ կապ ու-
նեցող գործարանները, այսինքն՝ այն գործարանները,
վորոնց մեջ և գոյանում արյան կարմիր և սպիտակ դրն-
դիկները:

Այդ գործարանների թվին է պատկանում վայձաղը:

Յերեմին հենց մեկ նոպայից հետո վայձաղն ուռ-
չում է և մեծանում: Առողջ մարդու վայձաղը կողերի
տակից դուրս չի գալիս, իսկ մալարիայով հիվանդի
վայձաղը, մանավանդ յերկար ժամանակ հիվանդի վայ-
ձաղը կողերի տակից դուրս է գալիս, հասնում է պորտին
և մինչեւ անգամ նրանից ել ներքեւ: Դա հերիք չե: Փայ-
ձաղը մեծանում է վոչ թե միայն յերկարությամբ, այլ
և լայնությամբ: Հիվանդացած վայձաղը դուրս է դա-
լիս ձախ կողերի տակից և հասնում է վորի աջ մասին.


Վայձաղն ուռչում է և մեծանում է այնպես, վոր մի մեծ
սեխի տեսք է ստանում: մեծացած վայձաղի քաշը հաս-
նում է մի քանի գրվանքի: Մեծացած վայձաղի չնոր-
շիվ հիվանդի փորն ուռչում է, վորից և խանգարվում է
վորովայնի գործարանների կանոնավոր գործունեցու-
թյունը:

ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՆ ՅԵՎՍ ԽԱՆԳԱՐՎՈՒՄ ԵՆ

Այս մալարիան, իրեւ արյան հիվանդություն,
հարվածում է մարդու մարմնի բոլոր գործարանները:
նույն իսկ և ներվային համակարգությունը: Բացի զրա-
նից, յերկար տեղող մալարիայի դեպքում վնասվում են
լյարդը, սիրտը, և յերկամունքները: Այս յերեք գոր-
ծարաններից մեկնումեկի խանգարման դեպքում հիվան-
դը ջրգող կոչվող տկարությունն է ստանում:

ՄԱՐԴՈՒ ՎՈՐ ՀԱՍԿՈՒՄՆ Ե ԼԻՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ

Մալարիայի համար վորոշ հասակ չկա: սկսած ա-
ռաջին որից մինչև ամենախոր ծերության հասակը մարդ
կտքող և հիվանդանալ մալարիայով: Դա բավական չե:
Մալարիայով հիվանդ հզի կնոջ արգանդի պառզն ել
վորոշ դեպքերում կարող է վարակվել մոր արյունից
մալարիայով և ծնվել մալարիայով հիվանդ: այդ տե-
սակ հիվանդ պառզը հզության լրիվ ժոմանակին չի
հասնում և շատ շուտ վիժում է: Վարակված մոծակն
ումը կծեց, նու յել հիվանդանարւ յե, անկախ այն բա-
նից թե քանի տարեկան է հիվանդացազը: իսկ հզության
դեպքում վարակվում է մինչեւ անգամ զես չնված զա-
վակը, ի հարկե, սա վոչ թե մոծակի կծելուց, այլ իր
վորից, վորին կծել և մոծակը և վարակել:



ՈՎ Ե ԱՎԵԼԻ ՇԱՏ ՏՈՒԺՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅԻՑ

Վորքան յերիտասարդ և հիվանդը, վորքան նա ուժեղ է, վորքան լավ պայմանների մեջ է ապրում հիվանդը, այնքան թեթև և լինում նրա մալարիան: Իսկ ընդհակառակը, ծերությունից կամ մի այլ հիվանդությունից կամ կյանքի վատ պայմաններից թուլացածների մալարիան բնթանում է շատ ծանր և մեծ վնասումներ. և առաջ բերում հիվանդի կազմվածքի մեջ:

ԻՆՉՊԵՍ Ե ԸՆԹԱՆՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հ.Ա.Խ.Հ. Ժողկոմխորհի վորոշմամբ (կայացած 1926 թ. ապր. 30-ին) Հայաստանը մալարիայի նկատմամբ բաժանված է 3 գոտու.

Առաջին գոտու մեջ մտնում են այն վայրերը, վորտեղ մալարիան տարածված է շատ ուժեղ. որինակ՝ Հրազդանի, Ղամարլի, Ղուրդուղուլու, Շամշադնի Հափանի շրջանները և այլն:

Յերկրորդ գոտու մեջ մտնում են այն վայրերը, վորտեղ մալարիան տարածված է չափավոր, ինչպես որինակ՝ Յերեան քաղաքը, Ալահվերդու, Բասարգեչարի շրջանը և այլն:

Յերրորդ գոտու մեջ մտնում են բոլոր այն վայրերը, վորտեղ շատ անշան չափով և տարածված մալարիան, ինչպես որինակ՝ Լենինականի գավառը, Նոր Բայազետի գավառի այլ մասերը (բացի Բասարգեչարի շրջանից) և այլն:

Մանկաբարական վիճակագրական տեղեկությունները ցույց են տալիս, վոր մալարիան ամենից շատ տարածված հիվանդությունն է Հայաստանում, որինակ՝ 1926 թվին Հայաստանում յեղել են մոտ 83.562 անձ հիվանդ մալարիայով:

ՄԱԼԱՐԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐԻ

Գ.Ա.Վ.Ա.Ռ.Ն.Ե.Ր	Ա.Հ.Ջ.Ջ.Հ.Պ.Հ.	Ա.Հ.Ջ.Ջ.Հ.Պ.Հ.	Ա.Հ.Ջ.Ջ.Հ.Պ.Հ.
Յերեվան	34439	19,5	
Եջմիածին	23319	19,9	
Լենինական	2518	1,3	
Լոռի-Փամբակ	5101	3,7	
Դիլիջան	7550	9,2	
Նոր-Բայազետ	534	0,4	
Դարալազիազ	1384	4,5	
Զանգեզուր	7516	10,0	
Մեղրի	1231	1,4	

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԱՅԴ ԹՎԵՐԸ

Մալարիայով հիվանդներ ամենից շատ կան Յերեվանի գավառում, իսկ ազգաբնակության առ հարյուրին եջմիածնում ավելի շատ են նրանք: Գավառների մեջ մալարիայով հիվանդներ գիմել են ամենաքիչը Նոր-Բայազետ գավառում:

ԻՆՉՈՎ ԲԱՑԱՏՐԵԼ ԱՅԴ

Յեթե ընթերցողն ուշադրությամբ հետևել է վերը գրածին, նա կարող է հասկանալ, վոր գրա պատճառը յուրաքանչյուր գավառի աշխարհագրական գիրքն է: Այն գավառները, վորոնք ընկած են տափաստանում, մալարիա շատ ունեն. իսկ այն գավառները, վորոնք լեռնային մասումն են գտնվում, մալարիա չունեն, կամ ունեն շատ քիչ:

Ինչպես հայտնի յէ, տափարակ տեղերում ճահճճներ և կանգնած ջրեր շատ կան, իսկ լեռնային մասի հողի հատկությունն այնպես է, վոր ճահճճներ և կանգնած

ջրեր չեն գոյանում: Բացի այդ, լեռնային մասի բարձր չիրքը նպաստավոր չե մոծակների և նրանց մարմնի մեջ զտնված մակարույժների գոյության համար:

Մի ուրիշ բան ել են ասում մեզ այդ թվերը: Հայուննի յե, վոր մեզնում յուրաքանչյուր զավառ ունի իւնային և տափարակ մտս. մալարիայով հիվանդների մեծ մասը գտնվում է զավառի ասափարտկ մասերում, իսկ իւնային մասում կամ ամենենին չկան, կամ չառ քիչ են: Յեթե թվերը լավ քննենք, մենք կաենենք, վոր Հայաստանի տափարակ տեղերի բնակիչները համարյա դիմումին հիվանդ են մալարիայով:

Զպետք ե մոռանալ, վոր ցուցակագրված են վոչ բոր հիվանդները. բոլոր հիվանդներն ել բժշկի մոտ չեն յեղել, վոր ցուցակագրված լինեյին: Հաստատապես կարելի յե ասել, վոր, յեթե մալարիայով բոլոր հիվանդները դիմեյին բժշկին, անային միջոցներով չբժշկվեյին, այն ժամանակ մալարիայով հիվանդների թիվը չառ ու չառ ավելի կը լիներ:

Վորպեսզի գաղափար ունենալ թե ինչ չափերի յե հասնում մալարիան Հայաստանի մի քանի վայրերում, բերում ենք թվական տվյալներ ազգաբնակչության մեջ կատարած հետազոտությունից. Դիլիջանի գավառի Ներքեի Աղջան գյուղում 100 բնակչից 82 հիվանդ ե մալարիայով. մինույն գավառի Թաթլու գյուղում 100-ից 85-ը և հիվանդ. Եջմիածնի գավառի Արմտառու գյուղում 95-ը, նույն գավառի ներքեսի Ղարխան գյուղում—84-ը: Մեզրու գավառի Շվանիձոր գյուղում 86-ը և Դարալադյազի գավառի Ղոյթուր գյուղում 92-ը:

Հիւնվելով այս հետազոտությունների վրա, պետք է ընդունել, վոր Հայաստանում կա առնվազը 450,000 հիվանդ մալարիայով, այսինքն ամբողջ Հանրապետության ազգաբնակչության համարյա կեսը հիվանդ ե մալարիայով:

ԴՆԶ ԵՆՔ ՅԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ ՄԵՆՔ ՍՐԱՆԻՑ

Յեթե հաշվենք, վոր յուրաքանչյուր հիվանդ տկարության պատճառով կորցնում ե աշխատանքի 10 որ, այն ժամանակ կը տեսնենք, վոր Հայաստանի հիվանդները 1926 թվին կորցրել են մալարիայի պատճառով 4,500,000 բանվորական որ: Յեթե հաշվենք յուրաքանչյուր հիվանդի որական աշխատավարձը մեկ ոուրլի, մենք կստանանք չորս ու կես միլիոն ոուրլի, այսինքն՝ 1926 թվին Հայաստանի աշխատավորությունը կորցրել է չորս միլիոն հինգ հարյուր հազար ոուրլի: Այժմ հասկանալի յե՝ թե ինչու մալարիան մեծ դժբախտություն ե հիվանդացողի համար, մեծ պատուհաս ե ազգաբնակության համար և մեծ չարիք պետության համար:

Այժմ հասկանալի յե՝ թե ինչու մենք պետք ե կազմակերպվենք և պետք ե միացած ուժերով կովենք ուզ սարսափելի հիվանդության դեմ:

Հիվանդները պետք ե կովեն, վոր իրենք առողջանան և աշխատանքից չզրկվեն. Արանք պետք ե կովեն մալարիայի դեմ, վոր ուրիշների վարակման պատճառ չգառնան: Իսկ առողջներն ել պետք ե կովեն, վոր իրենք ևս չիվանդանան և աշխատանքից չը զրկվեն: Յուրաքանչյուր առողջ շը պետք ե մոռանա, վոր քանի կան մալարիայիով հիվանդներ, քանի կան մալարիա տարածող մոծակներ, ինքն ել կարող ե մի որ հիվանդանալ: Վոչ վոր ազատ չե մոծակի կծելուց, յեթե միջոցներ չը գործադրի:

Ահա այդ միջոցներին ե անցնում ենք մենք այժմ:

ԴՆԶՊԵՍ ԿՈՎԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ

Մենք արդեն գիտենք, վոր մալարիան վարակի: Հիվանդություն ե, ապա ուրեմն նրա դեմ պետք ե

կովել հենց այնպես, ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունների դեմ, այսինքն՝ վարակի դեմ:

Առաջ աշխատում ելին վարակի առաջն առնել մեկուսացնելով վատանգավոր վայրերը, խափանելով բոլոր ձանապարհները, վարոնք տանում ելին դեպի վարակիչ հիվանդության վայրը. վարակիչ հիվանդին անդատձու առանձնացնում ելին:

Բայց այժմ այդ ձևի կոխվը միայն ժանտախտի համար ե թողնված:

Այժմ գիտությունն այլ կերպ է կոխվ մզում. նոսովորեցնում ե ինչպես պետք ե ապրել, ինչ նիստ ու կաց պետք ե ունենալ, վորպեսզի չը հիվանդանալ:

Այժմ գիտությունը ուրիշ միտք է հետապնդում նա ասում ե, վոչ թե հարկավոր ե հիվանդանոցներ հիմնել հիվանդներին բժշկելու համար, այլ հարկավոր ե այնպես ապրել, վոր ամենեին չը հիվանդանալ, վոր կարիք չը լինի հիվանդանոց դիմելու և բժշկվելու:

Գիտությունը մեզ ցույց է տվել ընդհանուր պայքարի ուղին բոլոր վարակիչ հիվանդությունների դեմ, նույնպես և մալարիայի դեմ:

Մենք գիտենք, վոր մալարիայի մանրեն բնության մեջ չի գտնվում, նա գտնվում է մալարիայով հիվանդի արյան և մոծակների մարմնի մեջ:

Նույնպես գիտենք, վոր մոծակն է ծծում հիվանդից արյունը և նրա միջի գտնված մանրեները ու հետո, կծելով մի ուրիշ առողջի, վարակում է առողջին. մենք նույնպես գիտենք, վոր ով մի քանի անգամ տկարացել է մալարիայով, նրա մարմնի մեջ մնում են մանրեները թագ կացած և մի հարմար որ այդ մանրեները դուրս են գալիս իրենց թագ կացած տեղից, բազմանում են ու նորից հիվանդացնում:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԱՐՎԵԼ

Յուրաքանչյուր առողջ մարդ վերը գրած խոսքերը միշտ պետք է պահի մտքում և այնպես ապրի, վոր չը հիվանդանա. դրա համար առողջը պետք է նախազգուշական միջոցներ գործադրի, իսկ հիվանդը նույնպես պետք է այդ միջոցները գործադրի, վոր ուրիշների վարակման պատճառ չը դառնա:

ՎՈՐՈՒՔ ԵՆ ՆԱԽՍԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Փոքքերը ցույց են տվել, վոր մալարիայի տարածման տեղերում խինին ընդունելը (խինիզացիա) պաշտպանում է առողջներին մալարիայով հիվանդանալուց:

Մայիս ամսից սկսած մինչև հոկտեմբեր ամիսը յուրաքանչյուր առողջ մարդ պետք է ընդունի խինին, վոր վերծ մնա մալարիայից:

Խինինը կարելի յե ընդունել կամ ամեն որ մանբշափերով, կամ 4-5 որը մի անգամ, բայց մեծ շափով. այնպես վոր յուրաքանչյուր մարդ ամառը պետք է ընդունի խինին վոչ պակաս 8 գրամից, կամ 2 մախալից:

Մալարիայի ամենայենուն չրջանը մայիսից մինչև սեպտեմբեր է. մարտին զարթնում են ձմեռվաքնած մոծակներն ու կծում հին հիվանդներին, այսպես կոչված մանրետկիրներին, և կծելով առողջներին վարակում են նրանց ևս. իսկ ամառը նոր մոծակներ են դուրս գալիս և կծելով նախ հիվանդներին ապա առողջներին տարածում են մալարիան:

Մոծակները կծում են յերեկոյան արև մանելուց հետո մինչև վաղ առավոտ, ուստի խինինն ավելի լավ է ընդունել ցերեկվա ժամը 2-3-ին կամ առավոտյան 11-12-ին, կծելուց 5-6 ժամ առաջ, վոր ներգործի մոծակի կծելուց հետո մարմնի մեջ մտած մանրեյի վրա:

ի հարկե, խինինը պետք է ընդունել կանոնավոր կերպով և բացի գրանից պետք է ընդունել խկական իսինին և վոչ կեղծ:

Անկանոն ընդունելը և խինինի կեղծ տեսակն ընդունելն անհաջողության և մատնում այդ նախազգուշական միջոցը, վորը շատ մեծ նշանակություն ունի իրական կրանքում:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆՍԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄՈՇԱԿՆԵՐԻՑ

ԻՆՉՈՐԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄՈՇԱԿՆԵՐԻ ԿԾԵԼՈՒՑ

Այդ նպատակի համար յերկու ձև կա, մեկն այն, վոր մարմնի բաց մասերին քում են զանազան հեղուկներ և յուղեր:

Մոծակներն ուժեղ հստից փախչում են. բայց այդ հոտափետ հեղուկներն ու յուղերը միայն փակ սենյակում կարելի յե գործածել, իսկ բացողյա նրանք նշանակություն չունեն, վորովհետեւ շատ շուտ գոլորշիանում են և զրանից ել անցնում են նրանց զորությունը. բացի գրանից, նրանք թանգ են. ամենալավը ֆրանսիական սկիզբարն ե, հետո մեխիակի յուղը. ի հարկե, չի կարելի գործածել այնպիսի յուղեր և հեղուկներ, վորոնք գրգռում են քիթը, կոկորդը և աչքերը, հազեցնում են կամ մի ուրիշ վնաս հասցնում:

ՄՈՇԱԿՆԵՐԻ ԿԾԵԼՈՒՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԼԱՎԸ ՀԵՏԵՎՅԱԼՆ Ե.


ա) Հագուստը հարկավոր է գործ ածել հաստ կոսորից և ծածկել մարմնի բաց տեղերը՝ յերեսը, ձեռքերը պետք է պաշտպանել նաև վոսները. բարակ գուլպաներն ամենենին չեն պաշտպանում մոծակների կծելուց:

Զեռքերին ձեռնոցներ պետք է հագնել, իսկ յերեսը պետք և ծածկել ծածկոցով, վորը պետք է հեռու լինի յերեսից. Հագուստը պետք է լինի սպիտակ գույնի, վորովհետեւ փորձը ցույց է տվել, վոր մոծակները մութ կրտորը չատ են սիրում, իսկ սպիտակ կոսորից ընդհականակը փափչում են:

բ) Հայտնի յե, վոր մոծակներն ավելի չատ կծում են յերեկոները և առավոտյան, մարդու քնած ժամանակը: Յերեկոները, քանի արթուն և մարդ մի կերպ պաշտպանվել կարող ե, բայց քնած ժամանակը դա անհնար է. այդ և պատճառը, վոր մարդիկ մեծ մասամբ վարակվում են իրենց քնած ժամանակը. ուստի հարկավոր և պաշտպանվել մոծակներից քնած ժամանակ:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ ե ընակարանի լուսամուռները պատել մեսաղյա բարակ ցանցով. ցանցը պետք է լայն ծակեր չունենա, վոր մոծակները չանցնեն զրացի սենյակը. ցանցի ծակերը չատ նեղ չպետք է լինեն, վոր ողափոխությունը չխափանվի. բնակարանների զոների առաջ պետք է մետաղյա ցանցից առանձին մուտք չինել ամուր և լավ ու հեշտ ծածկվող զոնով, վոր մոծակները գոնից չմտնեն: Դա լրագական չե, պետք է փակել բնակարանի ըուլոր անցքերը, որինակ՝ ողանցքները, ծխնելու լցները, վաստրանի անցքը և այլն...

գ) Յեթե դա հնարավոր չե, պետք է քնել ծածկոցի տակ. բարակ կոսորից (թանզիվից, մարլից կամ բարակ կտավից) ծածկոց են կարում և արկղի պես մահճակալի վրա հագցնում: Կան այնպիսի մոծակաշատ տեղեր, վորակեղ այդ ծածկոցը սենյակի չափ են պատրաստում և ծածկոցի տակ են անցկացնում ամբողջ գիշերը՝ յերեկոյան մութն ընկնելուց հետո մինչև հետեւյալ որվա առավոտը:



դ) Յեթե դա յել անհնազ է, բացողյա քնելիս պետք է աթար վառել (ատարթ) քնելու տեղին մոտ. աթարի ծուխը խիստ փախցնում է մոծակներին, այդ ծուխը տանել չեն կարողանում մոծակները. և խարույկը պետք է ամբողջ գիշերը վառել, վոր ոգնի, հակառակ դե գ-քում նշանակություն չի ունենա:

ե) Բայց կան տեղեր, վորտեղ մոծակներից աղաս-վելու համար քնում են բարձր կտուրների վրա: Յեկ իրոք, այդ միջոցը բավականին ոգնում է. դա բա-ցատրվում է նրանով, վոր մոծակները չատ բարձր չեն թուշում, բացի դրանից, բարձր տեղերում միշտ քամի չե լինում, քամին փախցնում է հեռու: Այդ տեսակետից ամենալավը բարձր պատշգամբներն են, վորոնք յեր-բեմն շինում են մի քանի հարկից և քանի բարձր և հար-կը, այնքան ապահովված են նրա վրայի քնողները. պատշգամբը շինում են չորս բարձր սյան վրա. սյու-ներն ազատ են թողնվում, այսինքն՝ նրանց արանքները բաց են, քամին ազատ փչում են և մոծակներին հեռաց-նում պատշգամբից. բարձր տեղում քնած մարդկանց հոտը չի զիազում մոծակներին և նրանք հեռու յեն փախ-չում քամու շնորհիվ: Պատշգամբների (քեաթիլների) մոտ ծառեր չպետք ե լինեն, վորպեսզի մոծակները նր-րանց ոգնությամբ չը բարձրանան վերի (տես նկար 7):

Փորձերը ցույց են տվել, վոր պաշտպանված բնա-կարաններում ապրողները չատ քիչ են հիվանդանում մալարիայով. և այժմ մալարիա ուսումնասիրող խըմ-բերը մալարիա տարածված տեղեր գնալիս ամենից առաջ հոգ են տանում բնակարանների պաշտպանության մա-սին և իրոք, այս պաշտպանողական միջոցները փրկում են առողջներին վարակվելուց:

Իտալիայի մի քանի յերկաթուղագծերի վրա գիշեր ժամանակ աշխատող յերկաթուղու բանվորներն ու ծա-



Նկար 7. ԲԱՐՁՐ ՊԱՏՇԱՄԲ (ՔՅԱՐԻԿ)

ուայողները դոբծ են ածում բարակ մետաղից պատրաստված ցանցեր, ձեռնոցներ և այլն. և այդպիսով պաշտպանվում են մոծակների կծելուց, հետեապես և մարտրիայով վարակվելուց:

Ներկայումս բոլոր այն ճանապարհորդները, վորոնք ճահճոտ տեղերում են ճանապարհորդում, իրենց հետ միշտ վերցնում են բարակ կտորից (թանգիպից) կարած ծածկոց և գիշերը քնում են ծածկոցի տակ, տղատվերով բյուրավոր մոծակների խայթելուց (նկ. 8):


Մոծակները չառ սիրում են հարձակվել անային կենդանիների վրա: Մոծակների կծելուց ազատվելու համար կարելի յէ ողտպիկ նրանց այդ հատկությունից և բնակարանին կից պահել այծ, վոչխար, և ալ կենդանիներ, վորոնց մալարիան մարդուն չեն կարող փոխացել կծող մոծակները, սակայն այդ միջոցն այնքան ել մեծ առավելություն չունի և նրա վրա հույս դնել անկարելի յէ:

Այս բոլոր միջոցները ևս առավել պետք եւ գործազրեն հիվանդները, վորովհետեւ նրանք կրում են իրենց արյան մեջ մալարիայի վարակը, մալարիայի մակրուցները:

Մալարիայով յուրաքանչյուր հիվանդ պետք եւ լավ գիտակցի, վոր ինքը մանրեակիր եւ, վոր ինքն եւ վարակում մոծակներին և սրանք ել ուրիշներին, ուստի յուրաքանչյուր հիվանդ պետք եւ գիտակցություն ունենարժշկվելու և զգուշանալու ուրիշի վարակման պատճու դառնալուց:

ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՄԱԼԱՐԻԱՅԻ ՏՄՐՄԱՆ ԴԵՄ

Մենք արդեն վերն ասացինք, վոր մալարիա տարածողները մալարիայով հիվանդներն են և մոծակները, ուրեմն ամենամեծ ուշագրությունը մենք պետք եւ



դարձնենք մալարիայով հիվանդների և մոծակնեղի վրա:

Զինեն մալարիայով հիվանդներ, մոծակները չեն վարակվի և հետեւալես ուրիշ առողջներին եւ չեն վարակի:

Մալարիայի տարածման դեմ կովելու միջոցներից մեկը՝ մալարիայով հիվանդներին բժշկելն է:

Յուրաքանչյուր հիվանդ պետք է խկույն և եթ դիմի բժշկին և պետք ե բժշկվի նրա աված գեղերով ու դեկավարվի բժշկից ստացած խորհուրդներով:

Հիվանդը ըլ պետք է տնային միջոցներով բժշկվի. նա չը պետք ե աչքաթող անի իր հիվանդությունը, նա պետք ե լավ իմանա, վոր ամեն մի ուշացած որ իր վրա շատ թանգ ե նստելու թե առողջության տեսակետից և թե աշխատանքից զրկվելու տեսակետից:

Մալարիայով հիվանդը պետք ե բժշկվի կանոնավոր և յերկար ժամանակ, վոր պարագիները ըլ մնան նրա մարմնի մեջ քագ կացած և ամեն հարմար առիթին դուրս գան ու նորից հիվանդացնեն նրան:

Մալարիայով հիվանդը մանավանդ պետք է բժշկվի ձմեռը, յերբ մոծակներ չկան, յերբ նա վոչ վոքի վարակման պատճառ չի կարող դառնալ:

Մալարիայով հիվանդը չպետք ե մոռանա, վոր գարունը բացվելուն պես մոծակները զարթնելու յեն իրենց քնից, կծելու յեն իրեն, վարակվելու յեն իրենից և հետո յել, կծելով առողջներին, վարակելու յեն նրանց ևս:

Ամեն կերպ պետք ե աշխատել, վոր մալարիայով հիվանդներ քիչ լինեն, մանավանդ այն տեղերում, վորտեղ մոծակներ շատ կան:

Ի հարկե, յեթե հնար լիներ տեղափոխել մալարիայով բոլոր հիվանդներին մի այնպիսի տեղ, վորտեղ

մոծակներ չկան, դա կը լիներ ամենալավ միջոցը, բայց
դա գժբախտաբար անհնար է:

Ուրեմն պետք է բժշկել մարտիայով Հիվանդներին
վոչ թե միայն նրանց բժշկելու համար, այլ վարակ-
վածների թիվը պակասացնելու համար, վոր ուրիշները
չը վարակվեն նրանցից, այսինքն մարտիայի տարած-
ման առաջն առնելու համար:

ՈՒՄ ՀԱՄԱՐ ՇԱՏ ՎՏԱՆԳԱՎՈՐ Ե ՄԱԼԱՐԻԱՆ

Մարտիան սաստիկ ազդում է հղի կանանց ար-
գանգում յեղած պաղի վրա: Մարտիա տարածված
տեղերում ծննդաբերությունը շատ է պակասում կնոջ
կազմվածքի քայքայման չնորհիվ և հղի կանայք մա-
րտիայի ազդեցության տակ հաճախ վիժում են
յերեխային, վորովհետեւ հղի կանանց վրա մա-
րտիայի թույնն ավելի ուժեղ է ներգործում, քան վոչ
հղի կանանց: Իսկ այս բոլորի հետևանքը՝ ազդաբնա-
կության աճումը թույնում է ազգաբնակությունը պա-
կասում է:

Ի՞նչ ԹԵՏՔ Ե ԱՆԵԼ

Պետք է բժշկել հղի կանանց. ձահճոտ տեղերում,
մարտիա տարածված տեղերում հղի առողջ կանայք
պետք է շարունակ ընդունեն խինին շատ մանր չափե-
րով, վոր չհիվանդանան:

Ժողովրդի մեջ տարածված է այն կարծիքը, թե խի-
նինը վիժեցնում է արդանդի պտուղը. Հիվանդ հղի կնո-
ջը խինին չեն տալիս որերով, շաբաթներով. բժշկի մու-
շեն տանում, բժշկին չեն հրավիրում, վոր խինին չնշա-
նակի: Բոլորովին մոռանում են, վոր մարտիայի ման-
րեն պտղի համար ավելի մեծ թույն է, վոր արգանդի
պառզն անսլատաս կվիժի, յեթե պտղի մայրը մնա-

Հիվանդ յերկար ժամանակ. Հիվանդ հղի կնոջ շրջապա-
տողներն ու մերձավորները բոլորովին չգիտեն, վոր
մարտիան այնպես է քայքայելու կնոջ մարմինը, վոր
նա կարող է վերջնականապես զրկվել մայր լինելու
քաղցր պարտականությունից:

Ահա այս տեսակետից պետք է ընդունել, վոր սխալ
է հղի կանանց չբժշկելլ: Հիվանդ հղի կինը պետք է
նույնպես բժշկվի, ինչպես և մնացած Հիվանդները,
մանավանդ վոր, ինչպես բազմաթիվ վորձերը ցույց են
տվել, խինինը վոչ մի վնաս չի հասցնում հղի կնոջը և
ոլողին:

ԻՆՉՊԵՍ ԿՈՏՈՐԵԼ ՄՈԾԱԿՆԵՐԻՆ

Մարտիայի տարածման գեմ կովելու միջոցներից
մեկն ել մոծակների վոչնչացումն է:

Մի շատ դժվար խնդիր է այդ: Բոլորն ել լավ գի-
տեն, թե վորքան դժվար բան է, յերբ մոծակները մի-
լիարդներով լցնում են ողը, յերբ նրանք մտնում են
ըիթդ, բերանդ, ականջներդ ու աչքերդ: Յեվ իրոք,
ձահճոտ տեղերում կյանքը դառնում է անտանելի մո-
ծակների չնորհիվ:

Ով յեղել է ձահճոտ տեղերում, ով ապրել է բընձա-
շատ տափարակում, գիտե ինչ բան է մոծակների յե-
րամը: Յերեկոները մոծակները խմբերով դուրս են զա-
լիս ցերեկվա իրենց թագսոյան տեղից, պարում են
չուրջդ, հարձակում վրագ և անինա կծում. իսկ լու-
սարացին դարձյալ խմբերով ու յերգելով մտնում են
սենյակ:

Կա արդյո՞ք հնար կոտորելու բոլոր մոծակներին,
յերբ յուրաքանչյուր եղ մոծակը մի ամառվա բնթաց-
քում տալիս է միլիոնավոր սերունդ:

Այս, յեթե գործազրեն ստորև բերած միջոցները և միենույն ժամանակ ողափեն բնության տված միջոցներից :

ԻՆՉՊԵՍ ԿՈՏՈՐԵԼ ՄՈԾԱԿՆԵՐԻՆ ԶՄԵՌԸ

Մենք արդեն գիտենք, վոր աշնանը ձվերից գուրս յեկած նոր մոծակները ժողովվում են մի վորեւ մութ անկյուն, թաղ կենում մինչեւ գարուն և ձմեռում այդակը: Գյուղերում մոծակներն ընտրում են խրճիթները, դոմերն ու մարագները և այլն, մանում նրանց անկյունները, կուչ զալիս և սպասում գարնան գալուն:

Ահա ձմեռը ամենամեծ ուշադրությունը պետք է դարձնել թե բնակարանների մութ անկյունների և թե գոմերի ու մարագների անկյունների և առաստաղների վրա և աշխատել կոտորել մոծակներին հենց ձմեռը նրանց քնած ժամանակ:

Այդ նպատակով ծուխ են դնում բնակարաններում, գոմերում, մարագներում և նկուղներում. դրա համար պետք է ամուր փակել լուսամուտներն ու դռները, կալնել բոլոր ծակերը, նույնիսկ և ամենափոքրերը և շենքի մեջ փառել մի վորեւ հատուկ ձար, որինակ ծծումք (քուզութիւն) կամ մի ուրիշ ուժեղ ձար. ծխից մոծակները բոլորն ել չշմում են. այդ դրության մեջ պետք է նրանց ավելով սրբել առաստաղներից, անկյուններից և դեանից ու ժողոված աղբը մոծակների հետ միասին ձգել կրակը:

Ծծումք փառելիս վերցնում են սենյակի համեմատ մի կտոր ծծումք, դնում են թափայի մեջ սենյակի մի բարձր տեղում և փառում. ծուխը բարձրանում է վեր և շշմեցնում կամ սպանում մոծակներին. ծծմբից ստացած դազը կոտորում է մոծակներին բոլոր միջոցներից լավ: Շենքի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր. առածության համար համար հարկափոր և վերցնել մոտ 3-4 դրամ

(մոտ մեկ մոխալ) ծծումք. այդ եժան և հարմար միջոցով հեշտությամբ կարելի յեւ ազատվել մոծակներից: Ծծմբի ծուխ տալիս շենքում չը պետք է լինեն մարդ և կենդանիներ: 1-2 ժամ ծուխը շենքում պահպահ հետո պետք է բաց անել գոներն ու պատուհանները, վոր ծուխը քաշվի ու հետո մաքրել շենքը սպանված մոծակներից:

Յերբեմն գործ են ածում զանազան ախտահանիչ և միջատներին սպանող միջոցներ, վորոնք մի տասն-ձին գործիքով ցանում են շենքի պատերին ու տուստաղներին. մոծակները չշմում են. այդ դրության մեջ նրանց սրբում են ավելով և ձգում կրակը:

Ախտահանիչ և միջատ սպանող հեղուկների փոխարեն կարելի յեւ գործածել և սովորական ջուր, կամ սապոնաջուր: Մոծակները ջրից թրջվում են և կպչում պատին, վորից հետո հետ և նրանց սրբել-ժողովերին ու կրակ ձգելը:

Ձմեռը մոծակներին կարելի յեւ կոտորել և կրակով: Փայտի վրա նավթով թրջած չոր են փաթաթում, վասում են այդ չորը և այրում առաստաղին և անկյուններին կպած մոծակներին: Այդ միջոցը շատ վտանգավոր և հրդեհի տեսակետից:

Բայց բազմաթիվ մոծակներ կան, վորոնք ձմեռում են քարի տակ, արքադների մեջ, չորացած խոտի, ուերենների մեջ, ծառերի փշակներում և այլ բացողյա տեղերում, վորտեղ վոչ մի գազ և վոչ մի հեղուկ ներգործել չի կարող. այդ մոծակների գեմ պետք է կովել ամառը:

ԻՆՉՊԵՍ ԿՈՎԵԼ ՄՈԾԱԿՆԵՐԻ ԴԵՄ ԱՍԱՌԸ ԲԱՑ ՈԴԻ ՄԵԶ

Նախ և առաջ պետք է ասենք, վոր մոծակները յենթարկվում են բնության որինքներին, ինչպես և մյուս

կենդանիները. մոծակների թիվը անհամեմատ շատ կը լիներ, յեթե բնությունը չը ստեղծեր նրանց թշնամիներին, վորոնցից և պետք ե ոգտվի մարդը:

ՎՈՐՈՆՔ ԵՆ ՄՈԾԱԿՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Մոծակների ամենազլիսավոր թշնամին չղջիկներն են, վորոնցից շատ կան և Հայաստանում. չղջիկը գիշերվա թուչուն է, վոր մկան նման է, ունի թևեր ու սուր աչքեր: Չղջիկները ցերեկը չեն յերեռում, թագ են կենում մի վորեե մութ տեղում, իսկ յերեկոյան դուրս գալիս մոծակների վորսի և անխնա կոտորում նրանց. իտալիայում մեծ չափով ոգտվում են այդ կենդանիներից: Ճահճոտ տեղերում ճահճների մոտ չղջիկների համար տախտակյա բարձր և մութ պատշգամքներ են պատրաստում և հնարավորություն են ստեղծում չըդջիկների համար ցերեկն անցկացնելու. չղջիկները յերեկոները դուրս են գալիս և վորսում մոծակներին:

Չղջիկներ մեզանում ել շատ կան և անմտություն կը լիներ նրանց վնասելը. մարդուն նրանք վնաս չեն տալիս, լույսից փախչում են ու վորսում միայն գիշերվա միջատներին, ի թիվով վորոց և մոծակներին և անխնա կոտորում: Պետք ե ոգտվել նրանց ծառայությունից: Նըրանք անգնահատելի յեն մոծակների դեմ բաց ոդի մեջ տարվող կովի համար:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՈՒՐԻՇ ՄԻԶՈՑ ԵԼ Ե ՏՎԵԼ ՄԱՐԴՈՒՆ

Հայտնի յե, վոր մոծակները ճահճներից 2-3 վերստից ավելի հեռու չեն թուչում. ուստի պետք ե աշխատել բնակվել ճահճներից 2-3 վերստ հեռու. պետք ե աշխատել բրնձի դաշտերը 3 վերստ հեռու լինեն բնակվել տեղերից, վոր մոծակները հեռու լինեն: Այդ նըրապատակով Հայաստանի ժողկոմիորչը հրատարակել է գեկրետ բրնձի դաշտերի մասին:

Դեկտեմ Հ. Ս. Խ. Հ Ժ Ժողովրդական կոմիսարների կողմէ թորհրդի:

Մալարիայի դեմ կովելու միջոցների մասին
1923 թ. մայիսի 21:

Բրնձի մշակում (չալթուկի արտեր):

Չալթուկի ցանքսերը պետք ե լինեն՝

ա) Յերեան քաղաքի բնակելի մասերից առնվազը չինդ վերստ հեռու:

բ) Հայաստանի մնացյալ վայրերում քաղաքներից, գյուղերից, յերկաթուղու կայարաններից և առհասարակ բնակության վայրերից առնվազը յերեք վերստ հեռու:

շ) Առնվազը յերկու վերստ հեռու գլխավոր խճուղեներից:

դ) Առնվազը մեկ վերստ հեռու մյուս հասարակ ձանապարհներից և յերկաթուղագծից:

Ծանոթություն.—Այն դեպքերում, յերբ բնակավայրերը գտնվում են առողջ (մալարիայի տեսակետից) բարձրավանդակների վրա, չալթուկի ցանքսերը կարող են գտնվել մի վերստից վոչ պակաս հեռավորության վրա:

Մալարիայի դեմ կովելու տեսակետից այս գեկրետը մեծ նշանակություն ունի, վորովհետև չալթուկի ցանքսերը արհեստական ձահճներ են հանդիսանում և շատ նպաստում են մոծակների զարգացմանը, ուստի նրանք պետք ե հեռու լինեն բնակելի տեղերից, վոր բնակիչները մոծակների զոհ չդառնան:

Մոծակները մի հատկություն ես ունեն, այդ հատկությունը վաղուց հայտնի յե մարդուն: Մոծակները բարձր չեն թուչում. մարդիկ բնակարանների մոտ պատըշգամքներ են շինում և գիշերն այնուեղ են անցկացնում: Այդ միջոցի մասին մենք արդեն խոսել ենք և ավելորդ ենք համարում նորից այսուեղ խոսելիք:

Ծխով մոծակներին վոչնչացնելիք նույնպես գիտենք։ Մարդիկ բնակաբանների մոտ խարույկներ են վառում, տարթ են վառում և ծխախեղդ անում մոտակա մոծակներին։

Կան տեղեր, վորտեղ մոծակների վոչնչացման համար գործ են ածում հատուկ պատրաստված արկղներ։ Փայտից արկղներ են պատրաստում և կախ են տալիս սենյակների անկյուններում։ Մոծակները լուսաբացին ժողովում են արկղների մեջ։ յերեկը պետք է մաքրել այդ արկղները մոծակներից մի վորեւ քիմիական նյութով կամ թեկուղ հենց ջրով ու հետո նորից կախել արկղները իրենց տեղը։

Այդ նպատակով կարելի յէ գործածել և թուղթ, վորի յերկու յերեսին կպչուն հեղուկ է քոված։ Թուղթը կտիռում են սենյակների անկյուններում և առաստաղից։ մոծակները լուսաբացին սենյակ են մտնում և սկսում նստուել թղթի վրա։ կպչում են հեղուկին, այլևս պոկ չեն դալիս ու սատկուաում։ Թուղթը լցվելուց հետո, պետք է այրել և նորը կախել։

Այս բոլորը գործադրվում են մոծակների գեմ։ բայց կան և միջոցներ, վորոնք գործադրվում են մոծակների թրթուի գեմ, նրանց ձվերի գեմ։

ՎՈՐՈՒՔ ԵՆ ԱՅԴ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սկսենք ձվերից։

Մենք արգեն գիտենք, վոր մոծակները ձու յեն ածում կանգնած ջրի յերեսին, նրանք կարող են ձու ածել շարժուն ջրերի այն տեղերում, վորտեղ ջուրն արագ հոռանք չունի, որինակ՝ առուների յեզրին։ Մոծակները կարող են ձու ածել ջրհորերի, ջրափոսերի յերեսին, յժակների ջրերի յերեսին, միայն ջրի խորությունը մեկ մետրից ավել չպետք է լինի։ Մի խոսքով վորտեղ կան-

գնած ջուր կտ, թեկուղ մի վոքրիկ ամանի մեջ, մոծակները մի քանի որից հետո ձու կդնեն։

Ի՞Զ Ե ՀԵՏԵՎՈՒՄ ՄՐԱՆԻՑ

Աշխատել, վոր բնակության վայրի մոտ, մանականդ բակում և պարտիզում կանգնած ջուր չլինի, թթով տակառ, կամ մի վորեւ աման առանց ծածկելու չլինի։

Պետք է չորացնել ջրափոսերը հողով կամ մոխրով. զնացկան ջրի յեզրերը մաքրել բույսերից, վոր ջուրը կանգ չառնի և նպատակով պայման չստեղծվի մոծակների ձու ածելու համար. նույնպես և պետք է հետեւ, վոր պարտեզներն ու արտերը ջրելիս ճահիճներ չգոյանան։

Պետք է չորացնել ճահիճները, անցկացնելով կանոնավոր առուներ և պիտանի դարձնելով հողը պետքան մշակույթների համար։

Խտալիայում զեռ վազուց հայտնի յեր, վոր ճահիճները կարելի յէ չորացնել և հողը պիտանի դարձնել յերկրագործական պիտույքների համար։ Այդ պատճառով ծանր հարկեր են դնում անխնամ և անմշտկ մնացած հողեր ունեցողի վրա և ընդհակառակը, պարզետարում են այն անձանց, վորոնք մշակում են խոպան տեղերը և պետքական գարճում յերկրագործության համար։ Այն ժամանակ չգիտեյին մալարիայի պատճառը, բայց հասկանում ելին, վոր մալարիայի գեմ կովելու ամենալով միջոցը պարագ և ճահճոտ տեղերի մշակումն են յերկրագործության համար պետքական դարձնելն ե։

Այժմ, յերը գիտենք մալարիայի պատճառը և գիտենք նրա տարածման միջոցները, գիտենք և կովելու միջոցները, այժմ տառեւ ևս հարկագոր և չորացնել կանգնած ջրերը ևս առաջել ճահիճները, վորպեսզի մոծակները հնարավորություն չունենան ձու ածելու։

Ի՞նչո՞ւ կրվել թրթուրների ԴԵՄ

Մենք գիտենք, վոր մալարիա տարածող մոծակի թրթուռը պառկում է ջրի յերեսին հորիզոնական գծով և ող և շնչում այդ գրության մեջ։ Փորձերը ցույց են տվել, վոր յեթե մի վորեւ յուղ լցնենք այդ ջրի յերեսին, յուղը զրկում է ողից, արգելում է թրթուրի շնչելը և գրանից սատկում է նա։

Այդ նպատակի համար ամենաեժան միջոցը՝ կանգնած ջրերի յերեսին նավթ լցնելն է։ Նավթը բարակ չերտով ծածկում է ջրի յերեսը և խանդարում թրթուրին ող շնչել։ Թրթուռը սատկում է և նոր մոծակ չի գոյանում։ (տես նկար 9)։

ՆՎՐԹԻ ԶԱՓԸ

Յուրաքանչյուր քառակուսի մետր ջրին վերցնում են 10 մախալ նավթ։ Նավթը լցնելու համար կա առանձին գործիք, վորը կոչվում է հիդրոպուրուս։

Ահա նավթ լցնելու ոգտի մի որինակ։ Յեզիրալուսում մի փոքրիկ քաղաք կա, իզմայիլե անունով։ Նա 1900 թ. ուներ 6000 հոգի ժողովուրդ։ Գրանցից 2250 հոգին այդ տարին հիվանդացել են մալարիայով։ Յեզիրար վորոնումներից հետո զտան, վոր պատճառը ճահիճներն են և 1903 թվին սկսեցին նավթ լցնել այդ ճահիճների ջրի յերեսին։

1903 թվին հանկարծ իջավ մալարիայով հիվանդացողների թիվը և 214 հոգի եյին հիվանդացել։ 1904 թ.—80 հոգի, 1905 թ.—37 հոգի և 1906 թ. վոչ վոք։ Ահա թե վոքքան մեծ ոգուտ ե տալիս կանգնած ջրի յերեսին նավթ լցնելը։

Փոքր տարածության կանգնած ջրի վրա նավթ լցնելը թե եժան է և թե նպատակահարմար։



Նկար 9. Ճահիճների վահանակությունը Հայոց կողմէց կազմված է 1870-ից 1880-ի մէջ։

Բայց մէծ տարածության ճահիճների վրա զա անկարելի յէ:

Կան տեղեր, վորտեղ մոծակների թրթուռին վոչնչացնելու համար գործ են ածում միջատ սպանող բույսեր: Կազիած ջրերի ափերի մոտ բուսցնում են միջառապան բույսեր և այսպիսով վոչնչանում մոծակների թրթուռները:

Մոծակների թրթուռներին սպանող կենդանիներ կան, վորոնց ծառայությունից ես պետք և ոգտվել:

Այդ նպատակի համար ճահիճներում բուժում են ջրի բզեզներ, գորտեր և մանր ձկներ, վորոնք կերակրում են հատկապես մոծակների թրթուռներով:

Աչա բոլոր այն միջոցները, վորոնք գործադրվում են մալարիայի տարածման դեմ:

Նախազգուշական միջոցներն են 1. անձնական նախազգուշական միջոցները, 2. հիվանդների բուժումը և 3. մոծակների կոտորումը:

Յուրաքանչյուր տեղում պետք և գործադրել նրան հարմար միջոցը:

Իսկ գլխավոր հաջողությունը կայանում է նրանում, վոր սանիտարական խմբակներին պետք և ոգնի ազգաբնակությունը. ինքը ազգաբնակությունը պետք և ունենա գիտակցություն գործադրելու հիշած բոլոր միջոցները, վորպեսզի ազատվի մալարիայից՝ Հայաստանի այդ մեծ չարիքից:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՈՎՈՒՄ ՄԱԼԱՐԻԱՅԻ ԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի կենտրոնում Յերեանում հիմնված և մի գիտական ինստիտուտ, վորն ուսումնասիրում և որոպիկական հիվանդությունները Հայաստանում և մշակում ենրանց դեմ պայքարի միջոցներ: Իսկ տեղերում այդ հիվանդությունների դեմ պայքարը տանում են

հատուկ հիմնարկություններ, վորոնք կոչվում են տրոպիկական կայաններ և պունկտեր:

Առաջապահության ժողովրդական կոմիսարիատը հիմնել է մալարիական կայաններ այն վայրերում, վորտեղ չառ և տարածված մալարիան. նրանց ընդհանուր թիվն է 10, վորոնցից 3-ը Հայաստանի կարմիր Խաչին ե: Այդ կայաններն ունեն ամեն տեսակ հարժարություն և հարկավոր բժշկական կազմ կովերու ավագալ տեղի մալարիայի դեմ:

ՏՐՈՊԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

1. Այդ կայաններում բնդունում են մալարիայով հիվանդներին, ծանր հիվանդներին պառկեցնում են դիշերությա բաժանմունքներում. բացի գրանից կայաններն ունեն լաբորատորիաներ, վորտեղ քննում են հիվանդների արյունը, մեզը և կղկղանքը. քննությունից ստացած հետեանքների համեմատ կատարում են բժշկությունը:

Կայանի աշխատակիցները հետազոտում են տվյալ տեղի ազգաբնակությունը և տեղական պայմանները մալարիայից վնասվածության տեսակետից. Հայտնարերում են կանգնած ջրեր, մոծակների բազմանալու տեղեր. Հայտնարերում են մալարիայով տառապողներին, Հայտնարերում են վոր աեսակի մալարիա յև տարածված ավյալ չըջանում և ինչ փոփոխություններ ե մացրել բրնձիկների մեջ, մի խոսքով բազմակողմանի ուսումնասիրում են տվյալ տեղի տրոպիկ հիվանդությունների առածումը և նրա պատճառները. պայքարի հաջողությունը գլխավորապես կախում ունի այդ տեսակ հետազոտությունից:

2. Կայաններն ունեն հատուկ անձինք, վորոնք պարզվում են մոծակներին կոտորելով, այդ աշխատանքի համար կայաններն ունեն հատուկ ձարեր և գործիքներ:

Այդ աշխատանքները կատարում են դլսավորապես ձբ-
մեռը, վորպեսզի ձմեռող մոծակները գարնանը քնից
զարթնելուց հետո չարիք չդառնան ազգարնակության
համար:

ԹՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԶՄԵՌՈՂ ՍՈԾԱԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ

ՏՐՈՊԱՅՑՑՈՒՆԵՐ	Նրանցից լին- թարկված են ծիփ				Ինչ նյութից և ծուխ տված
	Մաքուլինից առաջանալու ընկածքից	Հանկարից առաջանալու ընկածքից	Մաքուլինից առաջանալու ընկածքից	Մաքուլինից առաջանալու ընկածքից	
Յերեկանի	2194	1082	1112	—	Ծծումբ, աթար և փորմալին.
Եջմիածնի	602	58	544	—	Ծծում., աթ., հարդ
Դավալիի	903	199	704	—	Ծծումբ.
Ղուրդուղու-	781	—	781	—	Ծծում., հարդ և աթ.
լու					
Իջևանի	1199	72	1127		Ծծումբ, աթար, թացհարդ և ծղնոտ.
Շամշադինի	1731	6	1725	—	Ծծումբ, թաց հարդ.
Բեյուկվեդու	681	360	234	87	Ծծումբ.
Հագամենը	8091	1777	6227	87	

3. Կայաններում ձևուը բժշկում են բոլոր այն հի-
վանդներին, վորոնք ունեն զաղտնի մալորիտ, վորոնց
արյան քննությունը ցույց է տալիս, վոր նրանք ունեն
մանրեներ: Այս տեսակ անձինք կոչվում են մանրեակիր-
ներ. բժշկելով այդ տեսակ անձանց ձմեռը, փրկում են
ուրիշ առողջ անձանց ամառը նրանցից վարակվելուց:

4. Իսկ ամառը բացի հիվանդներին բժշկելուց մա-
լարիական կայանների աշխատակիցները ջանք են թա-

փում վոչնչացնել մոծակների սերունդը, չորացնելով
ձրջակայքի ճահիճները, մաքրել տալով առուները և
նավթ լցնելով կանգնած ջրերի յերեսին:

5. Տրոպիկ կայանների աշխատանքների մեջ գը-
խավոր տեղը բունում է և սանիտարական լուսավորու-
թյան աշխատանքները. կայանի կազմը կազմակերպում
և կայանի մեջ և նրանից գուրս ուրիշ գյուղերում զը-
րույցներ, գասախոսություններ և այդպիսով տարածում
և գիտելիքներ մալարիայի մասին, զարթեցնում և
ազգարնակության գիտակցությունը՝ մալարիայի դեմ
պայքարը կանոնավոր տանելու համար:

ՏՐՈՊԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

Իսկ թե հաջող են գնում մալարիայի դեմ տարվող
աշխատանքները, այդ ցույց տվեց 1926 թ. գեկտեմբեր
ամսին Յերևանում կայացած մալարիական ճակատում
կովող աշխատողների անդրանիկ համագումարը. բայց
ավելի լավ է թող խոսեն թվերը. ահա նրանք.

Մալարիայով հիվանդների շարժումը չայաստանում զա-
նազան տարիներում տրոպկայան. և այլ հիվանդանոցներում

Տարի- ներ	Դիմողների թիվը	Ալցիկում- ների թի- վը	Հիվանդա- պառկած- ների թի- վը	Հիվանդան- մեռների թիվը	Մեռածնե- րի %
1923	58438	143689	3152	114	3,6 %
1924	70490	196031	1979	54	2,7 %
1925	80271	292627	2175	35	1,6 %
1926	83592	333820	2373	25	1 %

ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ ԱՅՍ ԹՎԵՐԸ

Այս թվերն ասում են, վոր մալարիայի դեմ պայ-
քարի գործն այնքան լավ է դրված, վոր տարեց տարի

բժշկվողների թիվը շատանում է. դիմողների և այցելումների թվի ավելանալը ցույց է տալիս վոչ թե այն, վոր մալարիան և սաստկանում, այլ բժշկությունն այնքան և մոտեցել ժողովրդին, վոր հիվանդներն ավելի սիրով են բժշկում, վոր հիվանդները՝ փոխանտկ մնալու առանց բժշկության կամ փոխանակ տնային միջոցներով բժշկվելու, դիմում են տրոպկայան, իսկական բժշկական ոգնություն ստանալու համար:

Իսկ աղյուսակի մյուս սյունյակները պարզ ցույց են տալիս ինչպես տարեց տարի պակասում և մեռնողների թիվը. այս թվերը ցույց են տալիս, վոր մալարիան առիճանաբար տեղի յե տալիս ձեռք առած միջոցներին:

Ստորևի աղյուսակի թվերը ցույց են տալիս, թե ինչպիսի աշխատանք և կատարված տրոպկայաններում սանիտարական լուսավորության առարկում:

Տ ա ր ի	Դասախոսություն	Զբույց	Ռւնկնդիրների թիվը
1924	200	106	19295
1925	482	357	47813
1926	665	1012	96480

Բոլոր տրոպկայանների մահմակալների թիվը 96 է. բացի մալարիայից տրոպկայաններում բժշկվել են և այլ տկարություններով հիվանդներ, վորոնց թվերը չեն մտնում վերը բերած թվերի մեջ. նույնպես և չղետք և մոռանալ, վոր մալարիայով հիվանդներին բժշկում են Հանրապետության նաև ուրիշ հիվանդանոցներում, այնպես, վոր այս թվերը միայն տրոպկայաններին չեն վերաբերում:

Տրոպկայաններում կատարում են և խինիզացիա: Մենք արդեն գիտենք վերոգրյալից, վոր մալարիայով չիվանդանալու համար, մալարիայի առաջն առնելու

համար առողջները պետք ե ժամանակ առ ժամանակ խինին ընդունեն, վոր մոծակների կծելուց հետո չհիվանդանան. այս աշխատանքը կոչում է խինիզացիա և դրա վրա նույնպես մեծ աշխատանք են գործ դրում տրոպկայանների բժշկական աշխատավորները:

Այս բոլորից հետո պարզ է, վոր յուրաքանչյուր բժշկակից անձ պետք ե ընդառաջ զնա Հայաստանի Առողջապահության ֆողովրդական կոմիսարիատի ձեռնարկած միջոցներին և ամեն կերպ պետք ե աշխատի աջակցել տրոպկայանների աշխատակիցներին՝ արմատախիլ անելու Հայաստանի չարիք—մալարիան, դոկերոցքը:



ԱՌՈՂՋԱՀՈՒԹՅԱՆ ԺՐՈՎՎՐԴ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՀԱՆՐԱՄԱՏՀԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Դիմում

1.	Առողջապահ. հուշաներ	5 լ.
2.	Պալարափս	10 »
3.	Մարդու նինուներ	10 »
4.	Մաւկի մի խնի տարածված նիվանդությունները	10 »
5.	Մալարիա Բ. սպազմություն	10 »

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Տրախոմա
2. Կարմրուկ
3. Քուրես
4. Կատաղություն

Դիմում հետեւալ հասցեալի՝ Յերեան Առողջապահ. Փողովրդ.
Կոմիտարիատի Սան-Համաձարակ. բաժնին
Կամ Էրևան, Народ. Комисариат Здравоохранения
Сан-Эпидемич. отделу.



7109

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.